**Հետաքրքրվածության հայտերի ներկայացման հրավեր**

**(խորհրդատվական ծառայություններ. կազմակերպության ընտրություն)**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**Մ6 ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

**Առաջադրանքի անվանումը**՝ Սոցիալական երաշխիքների ապահովման գործընթացին աջակցության խորհրդատվություն

Հայաստանի Հանրապետությունը դիմել է Եվրոպական ներդրումային բանկին (ԵՆԲ)՝ Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հետ միասին համաֆինանսավորելու առաջարկվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհի վերանորոգման և բարելավման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը հանդես է գալիս որպես Իրականացնող Պետական Մարմին, իսկ «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը՝ Ծրագրի Իրականացնող գրասենյակ: Ծրագրում ընդգրկված ճանապարհի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 90կմ: Ճանապարհի հատված 1-ի աշխատանքները (կմ0+000-կմ38+450) ֆինանսավորելու է ԵՆԲ-ը (ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող ճանապարհահատված), իսկ հատված 2-ի աշխատանքները (կմ38+450-կմ91+000) ֆինանսավորելու է ԱԶԲ-ը (ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ճանապարհահատված): ԵՆԲ-ը վարձել է միջազգային խորհրդատվական կազմակերպություն՝ իրականացնելու Ծրագրի տեխնիկական իրագործելիության ուսումնասիրություն, բնապահպանության և սոցիալական ազդեցությունների գնահատում, ինչպես նաև տեխնիկական մանրամասն նախագծում: Ավելի ուշ ԱԶԲ-ը վարձել է խորհրդատու ԱԶԲ-ի և ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող երկու ճանապարհահատվածների համար Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) նախագծերը մշակելու նպատակով: Հիմնվելով մանրամասն նախագծերի վրա՝ Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհի համար մշակվել է 2 ՀՕՏԾ-ի նախագծեր՝ հաշվի առնելով ԱԶԲ-ի SPS (2009) պահանջները, ԵՆԲ-ի Սոցիալական ստանդարտների և չափանիշների մասին հայտարարագիրը, Ոչ կամավոր տարաբնակեցման մասին ուղեցույցը և ՀՀ օրենսդրությունը:

Խորհրդատվական ծառայությունները (Ծառայություններ) ներառում են վերջնական ՀՕՏԾ-ի և համապատասխան ուսումնասիրությունների պատրաստում և դրանց իրականացումը Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհի միայն ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող հատվածում:

Ակնկալվում է պայմանագիրը սկսել **2017 թվականի փետրվարին** և ավարտել **2017 թվականի դեկտեմբեր** ամսին:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը նշված ծառայությունները տրամադրելու նպատակով հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին (խորհրդատուներին) ներկայացնել հետաքրքրվածության հայտեր: Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկություններ՝ նշելով, որ որակավորված են և ունեն համապատասխան փորձառություն ծառայություններն իրականացնելու համար: Կարճ ցուցակում ընդգրկվելու չափանիշները հետևյալն են. Խորհրդատուի (որպես կազմակերպություն) ընդհանուր փորձառությունը Առաջադրանքի պահանջներին համապատասխան, Խորհրդատուի (որպես կազմակերպություն) հատուկ փորձառությունը Առաջադրանքի պահանջներին համապատասխան:

Հետաքրքրված խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարահային բանկի «Ուղեցույց: ՄԶՎԲ վարկերի և ՄԶԸ փոխառությունների և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուի կողմից խորհրդատուների ընտրություն և վարձույթ»  ուղեցույցի 1.9 կետին («Խորհրդատուների ուղեցույց» Հունվար 2011թ., վերանայված Հուլիս 2014), որտեղ սահմանված է շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային Բանկի քաղաքականությունը:

Որակավորումները հզորացնելու նպատակով՝ խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ և համատեղ հայտ ներկայացնել կամ ենթակապալի պայմանագրեր կնքել:

Խորհրդատուն կընտրվի «Խորհրդատուների ուղեցույցում» սահմանված «Որակի և գնի վրա հիմնված ընտրություն» ընթացակարգի համաձայն:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ստորև նշված հասցեով, աշխատանքային օրերին, ժամը 09:00-17:00 (տեղական ժամանակ):

Հայտերը պետք է ներկայացվեն գրավոր (առձեռն կամ փոստով, կամ էլեկտրոնային փոստով) ստորև նշված հասցեով մինչև **2016թ. դեկտեմբերի 26-ը, ժամը 17.00-ը Երևանի ժամանակով**:

**ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն**

**«Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ**

**Տնօրեն պ-րն Է. Սարգսյանին**

**ՀՀ, Երևան, 0010, Նալբանդյան 28**

**Հեռ: (+374-60) 540 525, (+374-10) 545 748**

Էլ.հասցե: esargsyan@transportpiu.am; gtadevosyan@transportpiu.am;

satasatryan@transportpiu.am; hordukhanyan@transportpiu.am